

3.ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ
3. PILOT POPULATION CENSUS
3. ПРОБНАЯ ПЕРЕПИСЬ

Մարդահամարի անցկացման մեթոդաբանական, կազմակերպչական և նյութերի մեքենայական մշակման ծրագրերի ու տեխնոլոգիաների փորձարկումն իրականացվում է փորձնական մարդահամարի անցկացման միջոցով, որն ընդգրկում է երկրի բնակչության ոչ պակաս, քան մեկ տոկոսը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ հանրապետությունում առաջացած ֆինանսական դժվարությունները հնարավորություն չտվեցին փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման հետ առընչվող բոլոր գործընթացներն իրականացնել միայն պետական բյուջեի միջոցներով:

Փորձնական մարդահամարի կազմակերպման և անցկացման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվեց ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից: Նշանակալից աջակցություն ցուցաբերեցին նաև Համաշխարհային բանկը, Նորվեգիայի կառավարությունը և Մոսկվայում տեղակայված ամերիկյան ABBY կազմակերպությունը՝ տրամադրելով սկաներային մուտքագրման ծրագրային փաթեթը:

2010թ. փորձնական մարդահամարն անցկացվեց

Testing of methodological, organizational and data processing programmes and technologies of Population Census conduction is realized through the Pilot Population Census including not less than one percent of population of the country.

Financial difficulties of the Republic influenced by the world financial-economic crisis did not allow to carry out Pilot Population Census preparation and conduction related processes only by means of the State Budget.

Financing of organization and conduction operations of Pilot Population Census was realized by the United Nations Population Fund. The World Bank, Government of Norway supported for the greater part and American Organization ABBY located in Moscow provided data entry scanning software package.

RA 2010 Pilot Population Census was conducted from 21st to 30th

Апробация программ по методологии, организации проведения переписи населения, а также, программ по технологии и машинной обработке материалов осуществляется с помощью проведения пробной переписи населения, которая должна охватить не менее одного процента всего населения.

Возникшие в республике финансовые трудности, вызванные глобальным финансовым кризисом, не позволили осуществить все процессы по подготовке и проведению пробной переписи населения исключительно из средств государственного бюджета.

Финансирование работ по организации и проведению пробной переписи было осуществлено фондом наро-донселения ООН. Значительную поддержку оказали также Всемирный банк, правительство Норвегии и базируемая в Москве американская организация ABBY, которая предоставила пакет программного обеспечения для ввода данных методом сканирования.

Пробная перепись населения 2010 года была проведена с 21 по 30 октября в следующих населенных



հոկտեմբերի 21-ից 30-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության հետևյալ բնակավայրերում.

Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում (փորձնական մարդահամարի արդյունքներով մշտական բնակչության թվաքանակը կազմել էր 19 367 մարդ, իսկ առկա բնակչության թվաքանակը՝ 18 333 մարդ, իսկ Սևանի քաղաքային համայնքի կազմում ներառված Գազարին գյուղի մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել էր 1595 մարդ, իսկ առկա բնակչությունը՝ 1538 մարդ):

Տավուշի մարզի Աչաջուր, Գանձաքար, Գետահովիտ, Խաշթառակ գյուղական համայնքներում (փորձնական մարդահամարի արդյունքներով մշտական բնակչության թվաքանակը կազմել էր 11 276 մարդ, իսկ առկա բնակչությանը՝ 10 603 մարդ):

Փորձնական մարդահամարի վայրի ընտրությունը կատարվել էր այնպես, որ դրանում ընդգրկվի հանրապետության բնակչության շուրջ մեկ տոկոսը՝ ապահովելով քաղաքային և գյուղական բնակչության համամասնությունները:

ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի նախապատրաստման աշխատանքներն իրականացվել են «ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման, նյութերի մեքենայական մշակման և հրապարակման աշխատանքների ժամանա-

October in the RA following residences:

In town Sevan of Gegharkunik marz (according to results of Pilot Population Census de jure population comprised 19 367 and de facto population 18 333, and in Gagarin village of Sevan urban community de jure population comprised 1595 and de facto population 1538).

In Achajur, Gandzaqar, Getahovit, Khashtarak rural communities of Tavush marz (according to results of Pilot Population Census de jure population comprised 11 276 and de facto population 10 603).

Sampling of places of the Pilot Population Census was done so to include about one percent of population of the Republic to ensure urban and rural population ratio.

RA 2010 Pilot Population Census preparation operations were realized according to «Schedule of preparation, conduction, data processing and publication operations of RA 2011 Population Census» (as a project it was approved by the RA State Council on Statistics) and calendar plan of preparation and conduction

пунктах Республики Армения:

в городе Севан Гегаркуникского марза (по результатам пробной переписи численность постоянного населения здесь составила 19 367 человек, а численность наличного населения - 18 333 человека, а в селе Гагарин, входящей в состав севанской городской общины, постоянное население составило 1 595 человек, показатель наличного населения - 1 538 человек);

В сельских общинах Тавушской области: Ачаджур, Гандзакар, Геховит, Хаштарак (по результатам пробной переписи населения численность постоянного населения составила 11 276 человек, а показатель наличного населения - 10 603 человека).

Как уже было сказано, выбор места пробной переписи был определен таким образом, чтобы численность населения вошедших в выборку населенных пунктов составил один процент от всего населения республики, одновременно обеспечив имеющиеся пропорции между городским и сельским населением.

Подготовительные работы пробной переписи РА 2010 года проводились в соответствии с "С графиком работ по подготовке,



կացույցի» (որպես նախագիծ հավանության է արժանացել ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից) համաձայն: Վերջինիս հիման վրա մշակվել է փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների օրացուցային պլանը:

Ըստ ժամանակացույցի մշակվել է փորձնական մարդահամարի անցկացման ծրագիրը (հարցաշարը), որը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության բոլոր նախարարությունների և շահագրգիռ կազմակերպությունների քննարկմանը:

Ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա այն վերջնական տեսքով հաստատվել է ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից:

Հարցաշարի որոշ հարցերի ճշգրիտ ձևակերպման և համապատասխան վանդակում ենթադրյալ պատասխանների ճիշտ ձևակերպման համար տեղի են ունեցել քննարկումներ Երևանի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի, ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի տեսչության, ՀՀ ԱՎԾ համապատասխան ստորաբաժանումների, ՀՀ կրթության և գիտության նախարարության առանձին մասնագետների հետ:

Հարցաշարում ընդգրկվել է դավանանքի մասին հարց, որի հարցադրման ճիշտ ձևակերպման և

operations of Pilot Population Census was developed based on it.

The programme (Questionnaire) of Pilot Population Census conduction was developed according to the schedule and presented to the discussion of all the Ministries and interested organizations of the Republic of Armenia.

Based on received suggestions and remarks it was approved in a final form by the RA State Council on Statistics.

Discussions were held with the Faculty of Theology of the Yerevan State University, Language State Inspection of the RA Education and Science Ministry, NSS RA corresponding subdivisions, separate specialists of the RA Education and Science Ministry, on some questions of the questionnaire and for supposed answers exact formation in corresponding cage.

Pilot Population Census Questionnaire included a question on religious belief and the NSSRA sent a letter to Department of Ethnic Minorities and Religious Affairs of RA Government for its exact formation and

проведению и машинной обработке материалов переписи РА 2011 года и публикаций ее результатов“ (в качестве проекта был утвержден Государственным советом по статистике РА). На основе этого графика был разработан календарный план подготовки и проведения пробной переписи.

В соответствии с календарным планом была разработана программа (вопросник) проведения пробной переписи, которая была представлена на рассмотрение всем министерствам Республики Армения и заинтересованным организациям.

На основе полученных предложений и замечаний она была утверждена в окончательном виде Государственным советом по статистике.

Для точной формулировки некоторых вопросов программы и возможных ответов на них были проведены дискуссии с богословским факультетом Ереванского государственного университета, с инспекцией по языку Министерства образования и науки РА, с соответствующими отделами НСС РА и с некоторыми отдельными специалистами Министерства образования и науки.

Поскольку в программу пробной переписи



պատասխանողի կողմից հնարավորինս բավարար պատասխան ստանալու համար ՀՀ ԱՎԾ կողմից նախապես գրություն է ուղարկվել Հայաստանի Հանրապետության կառավարության Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն՝ փորձնական մարդահամարի ծրագրի նախագծում հանրապետության բնակչության հավատքի վերաբերյալ հարցի ընդգրկման նպատակահարմարության վերաբերյալ:

Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը մեծ օժանդակություն է ցուցաբերել հրահանգում կրոնական դավանանք բնութագրիչի ճիշտ ձևակերպման և հարցի պատասխանների ցանկում թվարկված ծածկագրերից յուրաքանչյուրին համապատասխանող նիշի բացատրության հարցում:

Խնդրո առարկա հարցի լրացման հետ կապված մեթոդաբանական աջակցություն են ցույց տվել նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտ ՊՈԱԿ-ը, Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետը:

Հարցաշարի մեջ ավելացվել են նաև գյուղատնտեսությամբ զբաղվելուն վերաբերող որոշ հարցեր՝ մասնավորապես տնային տնտեսությանը պատկանող հողերի (տնամերձ կամ վար-

respondent's possible satisfactory answer as well as for appropriateness to include a question on religious belief of population of the Republic in the project of pilot Population Census programme.

Department of Ethnic Minorities and Religious Affairs assisted greatly for the exact formation of religious belief characteristic and corresponding symbol explanation in the instruction of each code numbered in answers list.

RA National Academy of Sciences, «Institute of Archaeology and Ethnography» SNCO of the RA National Academy of Sciences and the Faculty of Theology of the Yerevan State University provided methodological support connected with the issue.

Some questions on agriculture, particularly lands belonging to household (personal plot and leased land), agricultural livestock and fishing were also included in Pilot Population Census Questionnaire, and corresponding operations were done for the exact formation of answers with the staff of Agriculture Statistics Division of NSS RA.

намечалось включить вопрос о религии, то Национальная статистическая служба Республики Армения обратилась с письмом в Управление по вопросам национальных меньшинств и религии при Правительстве РА для правильной постановки вопроса и получения возможных удовлетворительных ответов со стороны респондентов, а также для уточнения целесообразности включения этого вопроса в программу пробной переписи.

Управление по вопросам национальных меньшинств и религии при Правительстве РА оказало большую помощь в правильной формулировке характеристик религиозных верований и в точном выборе возможных ответов на этот вопрос.

Относительно упомянутых выше вопросов, методическая помощь была предоставлена также Национальной академией наук РА, ГНКО «Институт – археологии и этнографии» Национальной академии наук РА, богословским факультетом Ереванского государственного университета.

В программу были также добавлены некоторые вопросы, касающиеся занятости домашних хозяйств в сельском хозяйстве (собственных или арендованных), наличия собственных сельскохозяйственных земель, количества сельскохозяй-



ձակալված), գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի և ձկնորսությամբ զբաղվելու վերաբերյալ, որոնց պատասխանների ճիշտ ձևակերպման համար համապատասխան աշխատանքներ են տարվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի աշխատակիցների հետ:

Առաջնորդվելով ՄԱԿ-ի հանձնարարականով՝ փորձնական մարդահամարի հարցաշարում ներառվեցին նաև այլ հարցեր, որոնք վերաբերվում էին տնային տնտեսության (այսուհետ՝ S/S) արտերկրից ստացած դրամական օգնությանը, վերջին 12 ամիսներին S/S-ում կենդանի ծնունդներին ու մահվան դեպքերին և դրանց գրանցման առկայությանը:

Հարցաշարի հիման վրա ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչության կողմից մշակվել է 2010թ. փորձնական մարդահամարի հարցաթերթը:

2010 թվականի փորձնական մարդահամարի հարցաթերթում ներառված էր համատարած դիտարկման 33, իսկ ժամանակավոր ներկա գտնվողների համար՝ 14 հարց:

- Մշակվել և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հաստատմանն են ներկայացվել մեթոդաբանական և հրահանգչական հետևյալ փաստաթղթերը.

- ՀՀ 2010 թվականի փորձնական մարդահամարի ընթացքում տների (շինությունների) ցուցակների և

Following the UN Recommendations, other questions on household (H/H) monetary assistance from abroad, birth and death cases and their registration in the last 12 months were included in pilot Population Census questionnaire.

2010 pilot Population Census questionnaire was developed according to the programme by the NSS RA Population Census Department.

33 questions for widespread enumeration and 14 for permanent present population were included in the 2010 Pilot Population Census questionnaire.

The following methodological and instructive documents were developed and presented to RA State Council on Statistics:

- Indications on drawing up and reception of lists of houses (buildings) and rural communities during RA 2010 Pilot Population Census
- Instruction on drawing up lists order of houses (buildings) in towns and big villages during 2010 RA Pilot Population Census
- Instruction on drawing up lists order of rural

яйственных животных и вовлеченности домохозяйств в сферу рыбоводства и рыболовства. Для выбора правильных формулировок возможных ответов на эти вопросы была проделана определенная работа с сотрудниками отдела сельскохозяйственной статистики НСС РА.

Руководствуясь рекомендациями ООН, в программу пробной переписи были включены и другие вопросы, которые касались получения домо-хозяйствами (далее ДХ) денежных средств из заграницы, числа родившихся и умерших в ДХ за последние 12 месяцев и наличием регистрации у них.

На основе программы Управление переписи населения НСС РА разработало переписной лист пробной переписи населения 2010 года.

В переписной лист пробной переписи населения 2010 года были включены 33 индивидуальных вопроса всеобщего наблюдения, а временно проживающие лица отвечали только на первые 14 из них.

Были разработаны и внесены в Государственный статистический совет РА на утверждение следующие методологические и инструкторские документы:

- методические указания по разработке и приему списков домов



գյուղական համայնքների ցուցակների կազմման և ընդունման մասին ցուցումները,

- Հայաստանի Հանրապետության 2010 թվականի փորձնական մարդահամարի ընթացքում քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակները կազմելու կարգի մասին հրահանգը,

- Հայաստանի Հանրապետության 2010 թվականի փորձնական մարդահամարի ընթացքում գյուղական համայնքներում և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակները կազմելու կարգի մասին հրահանգը,

- փորձնական մարդահամարի հաշվառման հարցաթերթը,

- Հայաստանի Հանրապետությունում 2010 թվականի փորձնական մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին հրահանգը,

- մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի, քաղաքներում և գյուղական վայրերում հրահանգիչհսկիչի և հաշվարարների հուշատետրերը,

- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալություններում մարդահամարի գործերը համակարգող տարածքային կոորդինատորի պարտավորությունները,

- ձև թիվ-1 բնակբնութագիր «Բազմաբնակարան շենքերի բնակարանների

communities and therein other settlements during RA 2010 Pilot Population Census

- Questionnaire of Pilot Population Census enumeration

- Instruction on conduction of RA 2010 Pilot Population Census and Population Census questionnaire fill in order

- Note-books of census area manager and his (her) assistant, in towns and rural residences for supervisor and enumerator

- Responsibilities of Population Census operations coordinating territorial coordinator in the NSSRA marz agencies

- Form N-1-housing characteristic, state statistical observation questionnaire fill in instruction "On multi flat house apartments (dwellings) characteristic"

- 1-9 K forms, Indications on organizational planning order of RA 2010 pilot Population Census conduction for NSSRA marz agencies (territorial divisions),

- Summary records of enumeration, supervisory and census areas and marz (territory) as well as enumeration ensuring

(строений) и сельских общин во время пробной переписи РА 2010 года.

- инструкция о порядке составления списков домов (строений) в городах и крупных селах в ходе пробной переписи РА 2010 года.

- инструкция о порядке составления списков сельских общин и других мест проживания на их территориях за время проведения пробной переписи РА 2010 года.

- переписной лист пробной переписи населения.

- инструкция по проведению пробной переписи населения 2010 года в Республике Армения и о порядке заполнения переписного листа.

- памятные книжки (тетради) для заведующего переписного участка, его помощника, инструкторов-контролеров и счетчиков в городах и сельских местностях;

- обязанности регионального координатора по переписи в марзовых агентствах НСС РА;

- инструкция по заполнению вопросника государственного статистического наблюдения "О характеристике квартир (помещений) в многоквартирных домах ": - форма N1;

- указания, форма 1-9К "о порядке формирования



(կացարանների) բնութագրի վերաբերյալ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի լրացման հրահանգը,

- ցուցումներ, 1-9Կ ձևաթղթերը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալություններին (տարածքային բաժիններին) Հայաստանի Հանրապետության 2010 թվականի փորձնական մարդահամարն անցկացնելու կազմակերպական պլանները կազմելու կարգի մասին,

- հաշվային, հրահանգչական, մարդահամարային տեղամասերի և մարզի (տարածքի) ամփոփ տեղեկագրերը, ինչպես նաև հաշվառման հսկողությունն ապահովող փաստաթղթեր՝ հսկիչ թերթ, վերահսկիչ փաստաթուղթ, մարդահամարի աշխատողի վկայական, տեղեկանք այն անձանց, ում դժվար է տանը գտնել և մարդահամարային այլ ձևաթղթեր,

- հրահանգ՝ մարդահամարի նյութերի ծածկագրման կարգի մասին,

- հրահանգ՝ մարդահամարի հարցաթերթի տվյալների մուտքագրման մասին:

Բոլոր փաստաթղթերը քննարկվել և համապատասխան որոշումներով հաստատվել են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նորմատիվ և անհատական որոշումներով: Նորմատիվային որոշումներով հաստատված իրավական ակտերը գրանցվել են ՀՀ արդարադատության նա-

documents: control sheet, supervising document, certificate of census employee, a note for those people who could hardly be reached at home and Population Census other papers

- Instruction on the order of the Population Census Questionnaire data coding,
- Instruction on data entry of the Population Census Questionnaire.

All the documents were discussed and approved by Normative and Personal Resolutions of the RA State Council on Statistics. Legal acts approved by the Normative Resolutions were registered by RA Ministry of Justice and published in Bulletin of Departmental Normative Acts.

Corresponding to 2010 pilot Population Census questionnaire 3 classifications and 1 manual were prepared for practice which were necessary for coding textual answers of the questionnaire. They were:

- Classification of Countries Names
- Classification of Economic Activity (part 1-2, part 3)
- Classification of Occupations (part 1-2, part 3 - Clarifications, part 4 -

организационных планов пробной переписи населения 2010 года” для марзовых агентств (региональных отделов) Национальной статистической службы РА;

- сводные ведомости счетных, инструкторских, переписных участков по марзу (району), а также документы, обеспечивающие контроль за учетом- контрольный лист, контрольный документ, удостоверение работника переписи, справка лицам, которых трудно застать дома, и другие формы;

- инструкция по кодированию материалов переписи;

- инструкция по вводу данных переписного листа;

Все документы обсуждались и были утверждены соответствующими нормативными и частными решениями Государственного совета по статистике РА. Правовые акты, принятые согласно нормативным решениям, были зарегистрированы Министерством юстиции РА и опубликованы в Справочнике Ведомственных нормативных актов (далее СВНА).

В соответствии с программой пробной переписи населения 2010 года для кодирования текстовых ответов переписного листа были подготовлены 3 наименования классификаторов и 1 пособие:



խարարության կողմից և հրապարակվել ԳՆԱՏ-ում:

2010թ. փորձական մարդահամարի հարցաշարին համապատասխան՝ կիրառության համար նախապատրաստվել են ծածկագրման 3 անուն դասակարգիչներ և 1 ձեռնարկ, որոնք անհրաժեշտ էին հարցաթերթի տեքստային պատասխանների ծածկագրման համար:

Դրանք էին.

- երկրների անունների դասակարգիչը,

- տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը (մաս 1-2, մաս 3),

- զբաղմունքների դասակարգիչը (մաս 1-2, մաս 3՝ պարզաբանումներ, մաս 4՝ կառուցվածքային և զբաղմունքներն ըստ այբբենական կարգի),

- ՀՀ վարչատարածքային միավորների ծածկագրման ձեռնարկը, ինչպես նաև ՀՀ բնակավայրերի նախկին անվանումների ցանկը:

Երկրների անունների դասակարգիչը հաստատվել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի N 144 - Ա 08.07.2005թ. հրամանով, տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009թ. հունիսի 3-ի N 372-Ն հրամանով, իսկ զբաղմունքների դասակարգիչը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009թ. հուլիսի 31-ի 632-Ն հրամանով: ՀՀ վարչատարածքային միավորների ծածկագրման ձեռնարկը մշակվել է մարդահամարի

Structural and Occupations in alphabetical order)

- Manual on Coding of the RA Administrative-territorial Units, as well as the list of former names of the RA residences.

Classification of Countries Names was approved by the Decree of the RA Minister of Commerce and Economic Development No 144-A of 08 July 2005, Classification of Economic Activity by the Decree of the RA Minister of Economy No 372-N of 03 June 2009 and Classification of Occupations by the Decree of the RA Minister of Economy No 632-N of 31 July 2009. Manual on Coding of the RA Administrative-territorial Units was developed by the Population Census Department and approved by the Resolution of the RA State Council on Statistics (SCS) No 31-A of 05 November 2010.

As pilot Population Census conduction date **from 14th to 23th of April** removed **from 21st to 30th of October** by the Decree of the RA Government No 313-N of 25, March 2010, by the Resolution of the RA SCS in the above-mentioned documents of Population Census corresponding changes of dates were

- классификатор названий стран,

- классификатор видов экономической деятельности (части 1-2, часть 3)

- классификатор занятости (части 1-2, часть 3-разъяснения, часть 4-структурная, а также виды занятости в алфавитном порядке),

- руководство по кодированию административных единиц РА, а также список прежних названий населенных пунктов.

Классификатор названий стран, был утвержден приказом министра торговли и экономического развития РА N144 - 08.07.2005г., классификатор видов экономической деятельности-приказом министра экономики РА N372-Н - 03.06.2009г. и классификатор занятости - приказом министра экономики РА N632-Н - 31.07.2009г.. Руководство по кодированию административных единиц РА было разработано Управлением переписи и утверждено Государственным советом по статистике РА (далее ГСС РА) постановлением № 31 -А от 5-ого ноября 2010 года.

В связи с изменением даты пробной переписи с **14-23 апреля на 21-31 октября 2010** года согласно решению Правительства Республики Армения N313-Н от 25-ого марта 2010 года, решением



վարչության կողմից և հաստատվել է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ ՀՀ ՎՊԽ) 2010թ. նոյեմբերի 5-ի թիվ 31-Ա որոշմամբ:

Քանի որ ՀՀ կառավարության 2010թ. մարտի 25-ի N 313-Ն որոշմամբ փորձական մարդահամարի անցկացման ժամկետը ապրիլի 14-23-ը տեղափոխվել էր հոկտեմբերի 21-ից 31-ը, ՀՀ ՎՊԽ որոշումով մարդահամարային վերոհիշյալ փաստաթղթերում ևս կատարվեցին համապատասխան ժամկետային փոփոխություններ:

Ըստ օրացուցային պլանի փորձական մարդահամարն իրականացվում է 3 փուլով.

- նախապատրաստական աշխատանքներ,
- հաշվառում՝ մարդահամարի անցկացում,
- հավաքագրված նյութերի մշակում:

Փորձական մարդահամարի նախապատրաստական աշխատանքների առաջին փուլով նախատեսված էր քաղաքների և խոշոր գյուղերի (5000 և ավելի բնակչությամբ) տների (շինությունների) ցուցակների կազմումը, որն անհրաժեշտ է դրանցում մարդահամարի շրջանացումն իրականացնելու համար, այսինքն՝ տարածքի բաժանումը հաշվային, հրահանգչական և մարդահամարային տեղամասերի: Ցուցակագրումն իրականացվեց Սևան քաղաքում՝ հատուկ այդ նպատակով հրահանգավորված

done either.

According to the calendar plan, pilot Population Census was implemented in 3 phases:

- Preparatory works,
- Enumeration- Population Census conduction,
- Collected data processing.

First phase of preparatory works of Pilot Population Census was intended to drawing up the lists of houses (buildings) in towns and big villages (5000 and more population) which was necessary for Population Census zoning therein, that is territory division into enumeration, supervisory and census areas. Listing of Sevan town was realized by employees, specially instructed for that purpose, registrars, during a month period started from 8th of February, 2010 by rounding houses (buildings) of Sevan town assigned area using schematic layout (6 copies) prepared by «Hoghshin monitoring» SNCO.

Cooperation was ensured during the listing operations with Gegharkunik Marzpetaran, Sevan Municipality, Condominiums, Responsibles of blocks of Gagarin, Gomadzor and Tsamaqaberd, employees of Sevan Asylum, Vazgenyan

ГСС РА в вышеуказанных документах также были сделаны соответствующие изменения сроков.

В соответствии с календарным планом пробная перепись была проведена в 3 этапа:

- подготовительные работы,
- учет -проведение переписи,
- обработка собранных материалов.

На первом этапе подготовки пробной переписи населения было предусмотрено составление списков домов (строений) в городах и крупных селах (с населением 5000 и более). Это было необходимо для проведения районизации переписи, то есть разделения данной территории на счетные, инструкторские и переписные участки. Составление списков в городе Севан проводилось специально обученными работниками - составителями списков, в течение одного месяца (с 8-ого февраля 2010 года), обходя все дома (помещения) и используя схематический план (6 копий) заданного участка г. Севана, разработан специально для этой цели ГНКО "Земстрой мониторинг".

В ходе работ по составлению списков было обеспечено активное сотрудничество с Гегаркуникским марзпетараном, мэрией города Севан, кондоминиумами, ответ-



աշխատողների՝ ցուցակագրողների կողմից մեկ ամսվա ընթացքում՝ սկսած 2010 թվականի փետրվարի 8-ից՝ տները (շինությունները) շրջագայելու միջոցով՝ օգտագործելով Սևան քաղաքի հանձնարարված տեղամասի սխեմատիկ հատակագիծը (6 օրինակ), որն այդ նպատակով պատրաստվել էր «Հողշին մոնիտորինգ» ՊՈԱԿ-ի կողմից:

Ցուցակագրման աշխատանքների իրականացման ընթացքում ակտիվ համագործակցություն է ապահովվել Գեղարքունիքի մարզպետարանի, Սևանի քաղաքպետարանի, համատիրությունների, Գազարին, Գոմաձոր և Յամաքաբերդ թաղամասերի պատասխանատուների, Սևանի հոգեբուժական հիվանդանոցի, Վազգենյան դպրանոցի, ՀՀ Ոստիկանության տարածքային անձնագրային բաժանմունքի և «Սևան» Ազգային պարկի աշխատակիցների հետ:

Ճշգրտվել են Սևան քաղաքի սահմանները, հնարավորինս կարգավորվել փողոցների անվանումները, թաղամասերի և տների համարակալումը, տեղադրվել են տների (շինությունների) համարանիշեր և փողոցների անվանացույցեր:

Ցուցակագրողների կողմից հայտնաբերված և սխեմատիկ հատակագծում կատարված բոլոր ճշգրտումներն անցկացվել են սխեմատիկ հատակագծերի մնացած բոլոր օրինակների

Seminary, RA Police Territorial Passport Division and «Sevan» National Park.

Borders of Sevan town were adjusted, streets names, numbering of blocks and houses were regulated as far as possible, houses (buildings) labels and streets names were placed.

All the adjustments found and done in schematic layouts by the registrars transferred to the other examples for using them in next phases.

As sampled villages in Tavush marz for Pilot Population Census conduction had population less than 5000 there were not done listing and mapping operations.

At the same time, taking into account records of households registration books managed in rural communities, were drawn up the lists of rural settlements and therein other residences in above-mentioned rural communities and therein registered households either by secretaries of communities' heads of staff of the RA Tavush marz.

After the listing was complete lists reception, check and summary operations were realized from Sevan town registrars and secretaries of

ственными лицами кварталов Гагарин, Гомадзор, Цамакаберд (г. Севана), севанской психиатрической больницы, семинарии Вазгениян, региональным паспортным отделением полиции РА и сотрудниками Национального парка "Севан".

Были уточнены границы города Севан, названия улиц, по возможности регулировалась нумерация кварталов и домов, а также на домах (зданиях) были установлены вывески номеров и названия улиц.

Все выявленные и нанесенные в схематические планы корректировки были занесены во все копии для использования их на следующих этапах.

Поскольку численность населения каждого села Тавушского марза РА, выбранных для пробной переписи была меньше 5000, составление списков и картографические работы здесь не были выполнены.

В то же время, исходя из текущих записей регистрационных книг учета домохозяйств, в упомянутых сельских общинах (и других населенных пунктах на их территории) Тавушского марза РА секретарями аппарата руководителей общин были составлены соответствующие списки, а также списки ДХ.

После завершения работ по составлению списков были



վրա՝ հաջորդ փուլերում դրանք օգտագործելու համար:

Քանի որ Տավուշի մարզում փորձական մարդահամարի անցկացման համար ընտրված գյուղերի բնակչության թվաքանակները 5000-ից պակաս էին, դրանցում ցուցակագրման և քարտեզագրման աշխատանքներ չկատարվեցին:

Միաժամանակ, հիմք ընդունելով գյուղական համայնքներում վարվող տնտեսությունների հաշվառման գրքերի գրանցումները, ՀՀ Տավուշի մարզի նշված գյուղական համայնքներում կազմվեցին գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակներ՝ համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարների կողմից՝ կազմելով նաև դրանցում հաշվառված S/S ցուցակները:

Ցուցակագրման գործառույթի ավարտից հետո իրականացվեցին Սևան քաղաքի ցուցակագրողներից և Տավուշի մարզի ընտրված գյուղական համայնքի ղեկավարների աշխատակազմի քարտուղարներից կազմված ցուցակների ընդունման, ստուգման և ամփոփման աշխատանքները:

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններն, ամփոփելով քաղաքներում տների (շինությունների) ցուցակների և գյուղական համայնքների ցուցակների մարզային տեղեկատվությունը, համապատասխան ամփոփագրե-

sampled rural communities՝ heads of staff of the RA Tavush marz.

The NSS RA marz agencies summarizing marz data on lists of houses (buildings) in towns and rural communities presented it in corresponding summaries to the NSSRA Population Census Department.

As of 1 July, 2010 according to households՝ registration books population enumeration check of 219 multi flat houses and private houses was carried out in Sevan town and in rural settlement of Gagarin of Gegharkunik marz by Sevan territorial division of the NSS RA Gegharkunik marz agency and in rural communities of Achajur, Gandzaqar, Getahovit, Khashtarak of Tavush marz agency by Ijevan territorial division of the NSSRA Tavush marz agency.

Organizational plans of of pilot Population Census conduction in the sampled territories were designed based on the filled in lists of houses and rural areas including Population Census zoning, that is distribution of the territory into census, supervisory and enumeration areas, calculation of Population Census personnel demand, as well as their recruitment, training (instruct-

проведены работы по приему, проверке и обобщению списков от составителей г. Севана и от секретарей аппарата руководителей общин Тавушского марза РА.

Марзовые агентства НСС РА, подытоживая информацию о списках домов (строений) в городах и сельских общинах по марзам, в соответствующих сводках представили их Управлению по переписи Национальной статистической службы Республики Армения.

По состоянию на 1-е июля 2010 года территориальными агентствами Гегаркуникского и Тавушского марзов, иджеванского и севанского районных отделов Национальной статистической службы РА проводились проверки регистрации населения в 219 многоквартирных домах и особняках города Севан, в сельском поселении Гагарин Гегаркуникского марза и в сельских общинах Ачаджур, Гандзакар, Геховит и Хаштарак Тавушского марза согласно учетным книгам домохозяйств.

Для правильной организации пробной переписи и обеспечения полномасштабности учета населения, на основе завершенных списков домов и сельских общин был подготовлен организационный план проведения пробной переписи, районирование, т.е. разделение территории на



րում ներկայացրել են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի վարչություն:

2010թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Գեղարքունիքի և Տավուշի մարզային գործակալությունների Սևանի և Իջևանի տարածքային բաժինների կողմից իրականացվել են բնակչության հաշվառման ստուգումներ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի 219 բազմաբնակարան շենքերում և առանձնատներում, Գագարին գյուղում և Տավուշի մարզի Աջաջուր, Գանձաքար, Գետահովիտ, Խաչթառակ գյուղական համայնքներում՝ ըստ տնտեսությունների հաշվառման գրքերի:

Փորձնական մարդահամարի ճիշտ կազմակերպման և բնակչության հաշվառման համընդգրկությունն ապահովելու համար ընտրված տարածքներում տների և գյուղական բնակավայրերի լրացված ցուցակների հիման վրա կազմվել է փորձնական մարդահամարի անցկացման կազմակերպական պլանը, որն ընդգրկել է մարդահամարային շրջանացում, այսինքն՝ տարածքի բաժանումը մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի, մարդահամարային կադրերի պահանջարկի հաշվարկ, ինչպես նաև նրանց հավաքագրման, ուսուցման (հրահանգավոր-

tion) and testing of preparedness, implementation of population census publicity and information campaign among population to ensure correct organization of pilot Population Census and inclusion of population enumeration.

As a result, 2 census, 25 supervisory and 120 enumeration areas were organised.

Population Census zoning was based on lists of houses (buildings), rural settlements and therein other residences, lists of hospitals, health resorts, rest houses, hotels and the like other organizations, corresponding cartographic data as well as overwork average norms defined for Population Census personnel.

